



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 42240 գործարքներ, որոնց քանակը 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 17.7%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 42.9%-ով: 2003թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 18465 օտարման գործարքների 90,4%-ը կազմել են առուվաճառքները, 9,1%-ը նվիրատվությունները և 0.5%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 47.8%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, ընդ որում 50.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. երկրորդ կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 17.3%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 35,7%-ով: 2003թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7781 առուվաճառքի գործարքների 69,4%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.8%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 40.5%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. ,րկրորդ կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/		
		2002թ. երկրորդ կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ	2003թ. առաջին կիսամյակ
Կենտրոն	220.0-970.0	298.2	400.4	369.4
Արաբկիր	170.0-560.0	194.0	299.7	257.8
Քանաքեռ-Զեյթուն	120.0-330.0	122.0	188.0	151.3
Նոր-Նորք	100.0-250.0	106.8	146.3	125.2
Ավան	100.0-190.0	91.8	145.7	118.4
Էրեբունի	100.0-300.0	111.7	157.3	132.7
Շենգավիթ	100.0-250.0	110.5	157.2	129.9
Դավթաշեն	100.0-260.0	107.0	186.6	149.1
Աջափնյակ	90.0-240.0	106.2	163.5	128.9
Մայաթիա-Սեբաստիա	90.0-240.0	102.3	153.6	128.9
Նուբարաշեն	50.0-100.0	49.5	69.2	60.7
Երևան	50.0-970.0	127.3	187.9	159.3

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երկրորդ կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 18.0%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ 47.6%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2003թ. երկրորդ կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2737 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 13.2%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 32.5%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. ,երկրորդ կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			2002թ. երկրորդ կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ	2003թ. առաջին կիսամյակ
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	58.8	62.7	61.6
	Ապարան	18.0-38.0	25.7	27.3	27.0
	Թալին	18.0-38.0	22.2	25.2	24.2
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	52.5	54.6	53.4
	Մասիս	20.0-85.0	51.8	54.4	53.9
	Վեդի	20.0-45.0	29.0	31.7	30.7
	Արարատ	22.0-40.0	28.8	31.5	31.0
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	73.9	84.5	80.0
	Արմավիր	21.0-58.0	42.2	45.6	44.1
	Մեծամոր	17.0-50.0	29.3	30.9	30.4
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	29.7	30.6	30.4
	Գավառ	20.0-45.0	29.2	30.4	29.8
	Մարտունի	18.0-35.0	28.3	29.6	28.8
	Վարդենիս	12.0-21.0	16.4	17.3	16.8
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	58.3	61.3	60.0
	Ստեփանավան	20.0-45.0	29.0	33.3	31.9
	Սպիտակ	17.0-33.0	22.5	24.0	23.1
	Ալավերդի	17.0-40.0	23.7	25.5	25.0
	Տաշիր	15.0-26.0	18.1	19.4	18.9
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	77.0	84.1	79.9
	Նոր Հաճն	35.0-75.0	50.3	52.2	50.8
	Բյուրեղավան	17.0-48.0	33.3	35.2	34.9
	Եղվարդ	28.0-55.0	37.9	40.6	39.8
	Հրազդան	18.0-45.0	28.5	30.9	29.9
	Ծաղկաձոր	22.0-95.0	72.2	75.8	74.4
	Չարենցավան	13.0-55.0	28.8	31.1	30.4
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	61.8	71.8	66.5
	Արթիկ	17.0-38.0	23.7	25.3	24.9
	Մարալիկ	15.0-45.0	21.1	23.7	23.0
Սյունիք	Գորիս	21.0-45.0	27.2	29.7	28.9
	Կապան	18.0-55.0	25.8	29.3	28.2
	Սիսիան	17.0-57.0	25.5	27.6	27.1
	Մեղրի	18.0-39.0	22.4	25.2	24.9
	Քաջարան	18.0-38.0	16.5	18.5	17.8
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	31.2	35.3	34.5
	Եղեգնաձոր	20.0-58.0	45.1	46.9	46.1

	Ջերմուկ	20.0-55.0	37.9	41.2	40.1
Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	32.3	36.2	35.6
	Իջևան	23.0-50.0	38.9	40.4	40.0
	Բերդ	15.0-45.0	27.2	29.3	28.6
	Նոյեմբերյան	15.0-45.0	24.9	26.8	26.5

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 8.1%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ 2.8%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 2652 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 666, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1986: 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 28,7%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 12,1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 35.5%-ով: 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 36.6%-ով, ընդ որում Երեւանում՝ 27.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 39.9%-ով: Ընդ որում 2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երկրորդ կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		2002թ. երկրորդ կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ	2003թ. առաջին կիսամյակ
Կենտրոն	200.0-990.0	301.5	411.3	372.2
Արաբկիր	160.0-580.0	195.1	303.4	260.5
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	124.3	190.1	153.0
Նորք-Մարաշ	180.0-640.0	246.2	304.6	284.7
Ավան	95.0-200.0	110.0	145.9	120.0
Էրեբունի	95.0-320.0	114.4	157.3	134.2
Շենգավիթ	85.0-260.0	111.4	158.1	131.2
Դավթաշեն	100.0-260.0	110.1	186.8	150.3
Աջափնյակ	85.0-230.0	107.3	163.1	130.5
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	110.2	153.9	130.5
Նուբարաշեն	45.0-110.0	52.5	72.3	58.8
Միջինը Երևանում	45.0-990.0	143.9	204.2	175.1

- Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսյին պողոտայի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն
- Աջափնյակ համայնքի տվյալներում Վահագնի թաղամասի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երկրորդ կիսամյակում, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 16.6%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 41.9%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երկրորդ կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2002թ. երկրորդ կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ	2003թ. առաջին կիսամյակ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	78.5	82.8	81.5
	Ապարան	20.0-45.0	35.5	38.8	37.9
	Թալին	15.0-35.0	24.8	28.1	27.6
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	58.6	61.8	61.1
	Մասիս	27.0-80.0	59.3	62.4	61.5
	Վեդի	25.0-60.0	34.6	36.3	35.7
	Արարատ	25.0-60.0	34.5	37.4	36.3
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	76.9	89.6	83.6
	Արմավիր	35.0-90.0	47.6	52.3	51.0
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	34.7	36.4	36.0
	Գավառ	25.0-65.0	37.6	39.9	39.3
	Մարտունի	20.0-55.0	31.9	33.9	33.3
	Վարդենիս	15.0-45.0	19.2	21.3	20.6
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	64.2	68.7	66.9
	Ստեփանավան	20.0-50.0	31.9	33.6	32.5
	Սպիտակ	17.0-50.0	23.2	24.1	24.0
	Ալավերդի	18.0-50.0	24.9	25.9	25.7
	Տաշիր	15.0-30.0	18.7	19.9	19.4
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	87.8	92.4	90.8
	Նոր Հաճն	35.0-80.0	51.6	54.2	53.5
	Բյուրեղավան	15.0-50.0	35.1	38.2	37.5
	Եղվարդ	23.0-70.0	43.8	47.3	46.4
	Հրազդան	25.0-65.0	37.2	40.0	39.2
	Ծաղկաձոր	45.0-110.0	83.5	85.2	84.2
	Չարենցավան	25.0-50.0	31.9	33.4	33.1
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	85.4	90.8	88.3
	Արթիկ	18.0-55.0	25.6	28.7	27.7
	Մարալիկ	15.0-45.0	22.5	23.9	23.5
Մյունիք	Գորիս	22.0-65.0	29.1	31.6	30.9
	Կապան	25.0-55.0	28.3	31.1	30.1
	Սիսիան	18.0-50.0	26.2	28.7	27.8
	Մեղրի	18.0-40.0	23.7	28.2	27.6
	Քաջարան	15.0-30.0	17.0	19.2	18.6
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	34.0	37.0	36.2
	Եղեգնաձոր	20.0-65.0	46.8	49.2	48.4
	Զեյրունիկ	25.0-60.0	40.0	43.3	42.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	37.0	39.2	38.7
	Իջևան	30.0-70.0	39.5	41.2	40.4
	Բերդ	20.0-50.0	28.6	30.9	30.3

	Նոյեմբերյան	20.0-50.0	28.3	30.8	30.6
--	-------------	-----------	------	------	------

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 7.3%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2.2%-ով:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում 2003թ. երկրորդ կիսամյակում գրանցվել են հողերի օտարման 3739 գործարքներ՝ 1593.45 հա /99.81 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով, որից 1319.77 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում, 1543.27 հա /97.04 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 1282.88 հա գյուղատնտեսական նշանակության, 46.85 հա /1.89 հա Երևանում/ նվիրատվության, որից 35.06 հա գյուղատնտեսական նշանակության և 3.33 հա /0.88 հա Երևանում/ փոխանակման, որից 1.83 հա գյուղատնտեսական նշանակության, գործարքներ: Հողերի օտարման գործարքների 4,1 % ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից :

2003թ. երկրորդ կիսամյակում հողերի առուվաճառքներից 476-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 145-ը՝ /24.30 հա/ Երևանում, իսկ 331-ը՝ /251.71 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 71 միավորը /220.83 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 380-ը՝ /35.35 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 22-ը՝ /17.83 հա/ հասարակական կառուցապատման և 3-ը՝ /1.99 հա/ արդյունաբերական օբյեկտների:

Ստորև ներկայացվում է 2003թ. երկրորդ կիսամյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	207	16.18	96	48.02	0	0.00	306	18.03	69	10.75
Արագածոտն	19	58.06	42	5.18	0	0.00	168	85.24	74	7.92	3	0.63
Արարատ	0	0.00	42	4.76	8	1.33	479	163.46	185	15.76	1	0.02
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	340	401.30	110	10.65	14	2.12
Գեղարքունիք	22	150.80	15	2.68	4	1.50	17	19.29	51	6.12	4	2.46
Լոռի	0	0.00	26	2.79	0	0.00	97	77.42	11	1.91	6	0.95
Կոտայք	30	11.97	121	11.22	8	20.01	293	120.84	363	35.10	12	4.45
Շիրակ	0	0.00	0	0.00	2	0.17	139	145.64	37	2.08	3	0.15
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	31	25.94	5	0.64	1	0.40
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	5	3.14	26	9.11	9	0.90	1	0.20
Տավուշ	0	0.00	0	0.00	4	0.14	18	8.79	9	0.66	0	0.00
Ընդամենը	71	220.83	453	42.81	127	74.31	1608	1057.03	1160	99.77	114	22.13

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 3555 առուվաճառքի գործարքներ, որից 1680-ը՝ գյուղատնտեսական, 1855-ը՝ բնակավայրերի, 20-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վաճառված 20 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 7 միավորը գրանցվել է /15.32 հա/ Արարատի, 1-ը /1.00 հա/ Գեղարքունիքի, 5-ը /1.00 հա/ Կոտայքի մարզերում և 7-ը /4.01 հա/ Երևանում: 2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարքներ /1-ը Երևանում, 2-ը Արարատի մարզում, որից 1-ը գյուղատնտեսական նշանակության/:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 1680, այդ թվում աճուրդ-վաճառքների 71, դատարանի վճռով 9 և վարձակալության իրավունքի վաճառքի 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	19	58.06	36.0	1940.0	760.0	145	53.30	840.0	7600.0	2420.0
Ապարան						2	1.97	130.0	1150.0	315.0
Թային						19	21.28	200.0	1680.0	345.0
Ծաղկահովիտ						2	8.70	170.0	2100.0	285.0
Արարատի մարզ										
Արտաշատ						249	71.75	740.0	10000.0	2000.0
Մասիս						79	26.72	400.0	5600.0	1055.0
Վեդի						145	63.99	450.0	7200.0	1220.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						83	63.21	650.0	4650.0	1230.0
Բաղրամյան						101	251.36	130.0	1000.0	430.0
Վաղարշապատ						154	85.50	980.0	11150.0	2140.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	0.64	420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի	1	3.00	360.0	360.0	360.0	7	1.84	100.0	4000.0	520.0
Սևան						1	0.25	100.0	1000.0	390.0
Վարդենիս	21	147.80	362.0	364.0	363.0	7	16.56	60.0	1180.0	230.0
Լոռու մարզ										
Ալավերդի						27	17.89	360.0	5500.0	900.0
Գուգարք						7	1.57	500.0	6000.0	1330.0
Սպիտակ						3	1.85	500.0	3300.0	1060.0
Ստեփանավան						47	39.72	180.0	4000.0	335.0
Տաշիր						13	16.39	100.0	400.0	240.0
Կոտայքի մարզ										
Արովյան	23	6.51	95.0	1465.0	740.0	137	45.85	520.0	10100.0	5170.0
Եղվարդ	5	5.00	314.0	314.0	314.0	122	53.96	380.0	6100.0	2540.0
Հրազդան	2	0.46	880.0	880.0	880.0	33	20.81	250.0	4000.0	760.0
Շիրակի մարզ										

Ախուրյան						72	57.21	550.0	760.0	670.0
Ամասիա						11	27.04	80.0	525.0	190.0
Անի						16	25.54	240.0	800.0	290.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						40	35.85	140.0	2300.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս						6	2.32	200.0	1600.0	402.0
Կապան						1	1.76	120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.22	400.0	4240.0	865.0
Սիսիան						23	21.65	90.0	1500.0	295.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						16	5.24	260.0	4000.0	1260.0
Վայք						10	3.87	120.0	3400.0	520.0
Տավուշի մարզ										
Բերդ						9	5.42	100.0	2000.0	465.0
Իջևան						4	2.00	530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան						5	1.37	100.0	8340.0	695.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի գտնվելու վայրից և հողատեսքերից:

2003թ. հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1100 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 246, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	42	51750.0	44.0	64.0	62.0	70	73695.0	120.0	3800.0	2230.0
Ապարան						1	1000.0	120.0	670.0	310.0
Թալին						3	4490.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	40	46358.0	88.0	1060.0	366.0	37	37640.0	175.0	2460.0	650.0
Մասիս	2	1200.0	338.0	342.0	340.0	119	90140.0	270.0	3680.0	800.0
Վեդի						29	29800.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						27	26425.0	180.0	2440.0	720.0
Բաղրամյան						3	4400.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						80	75697.0	280.0	3700.0	1270.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						11	8580.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ	1	10000.0	112.0	112.0	112.0			78.0	180.0	140.0
Մարտունի	14	16800.0	75.0	118.0	90.0	39	51675.0	120.0	320.0	225.0
Սևան						1	950.0	120.0	1000.0	230.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի	12	14620.0	108.0	110.0	109.0	3	6130.0	78.0	440.0	200.0
Գուգարք						1	1980.0	78.0	3800.0	650.0
Սպիտակ	9	11250.0	77.0	77.0	77.0	2	2540.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան	5	2000.0	103.0	103.0	103.0	4	6390.0	78.0	340.0	140.0
Տաշիր						1	2090.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	30	24440.0	27.0	198.0	100.0	199	177663.0	180.0	4300.0	1440.0
Եղվարդ	91	87800.0	86.0	305.0	125.0	148	162171.0	180.0	3670.0	1795.0
Հրազդան						16	11198.0	180.0	4120.0	1300.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						32	15018.0	120.0	2500.0	360.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի						4	5391.0	120.0	430.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ						1	400.0	120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	6417.0	78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						9	8972.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						8	5230.0	78.0	1600.0	490.0
Նոյեմբերյան						1	1320.0	78.0	670.0	210.0

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 65 գործարքներ՝ 57.51 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Երևանում /0.10 հա/, 30-ը՝ Արարատի /8.74հա/, 3-ը՝ Արմավիրի /4.00 հա/, 4-ը՝ Գեղարքունիքի /2.42 հա/, 6-ը՝ Կոտայքի /2.42հա/, 11-ը՝ Շիրակի /32.40 հա/, 2-ը՝ Սյունիքի /0.40 հա/ և 7 -ը՝ Տավուշի /7.02 հա/ մարզերում:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել են վարձակալության 3468 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2002թ. երկրորդ կիսամյակ համեմատ աճել է 1,1%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 26,0%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 256 բնակարանների, 84 բնակելի տների, 934 հասարակական, 121 արտադրական նշանակության օբյեկտների, 1 այգետնակի, 9 ավտոտնակների և 2063 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 251 վարձակալության գործարքների քանակները 2002թ. երկրորդ կիսամյակի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 48,7%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 59,4%-ով:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 8997.43 հա ընդհանուր մակերեսով հողեր /29.44 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 8103.88 հա կազմում են գյուղատնտեսական /որից 773.78 հա նախկին պահուստային/, 690.76 հա բնակավայրերի, 2.15 հա անտառային, 171.21 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 2202.78 հա , որից 1572.38 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 97.12 հա, որից 88.11 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1337.92 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	200.00	130	960.31
Արարատ	0	0.00	170	933.63
Արմավիր	0	0.00	180	1572.38
Գեղարքունիք	11	387.00	157	1070.09
Լոռի	5	139.00	34	96.33
Կոտայք	2	200.00	184	458.00
Շիրակ	4	308.00	143	1088.76
Մյունիք	5	103.92	43	331.77
Վայոց Ձոր	0	0.00	34	88.11
Տավուշ	0	0.00	50	166.58
Ընդամենը	28	1337.92	1125	6765.96

2003թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2870 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6,8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները առաջին կիսամյակի համեմատ աճել են 40.8%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 58.9%-ով: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /39.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.6%/, առանձնատների /13.3%/ և հողերի /22.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1374 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 38,2%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 37,7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 836.71 հա մակերեսով հողեր /5.99հա Երևանում/, որից 827.45 հա

գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 389.03 հա, որից 386.58 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 163 և 32 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակն աճել է 40,7%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 23.4%-ով: 2003թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 36.4%:

2003թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6306 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 1,7%-ով, իսկ 2003թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 54,9%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.9%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46.2%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն